CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
DEPUTY CHAIRMAN

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАМЕСТИТЕЛЬ ПРЕДСЕДАТЕЛЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.:(37410) 589 611
Fax:(37410) 587 306

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 6
Հեռ.՝ (37410) 589 611
Ֆաքս՝ (37410) 587 306

0010,Ереван, Вазгена Саркисяна,6
Тел.: (37410) 589 611
Факс: (37410) 587 306

08.07.2015 N 20.1-07/0206-15
30.06.2015 Ձեր N 1111/47491-15

Հայաստանի Հանրապետության արտաքին
գործերի նախարարի տեղակալ
պարոն Շավարշ Քոչարյանին

Պատճենը՝ Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար
պարոն Գագիկ Խաչատրյանին

Հարգելի պարոն Քոչարյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կողմից՝ «Կապիտալի ազատ շարժն ապահովելու համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկատվության, այդ թվում գաղտնի, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունը կնքելու նպատակահարմարության վերաբերյալ տեղեկանքը:

Կից՝ 2 էջ:

Հարգանքով՝ Ներսես Երիցյան

06500

08 JUL 2015

Կատարող՝ Ա.Թորոսյան
Հեռախոս՝ 59-26-84

Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության կողմից՝ «Կապիտալի ազատ շարժն ապահովելու համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկատվության, այդ թվում գաղտնի, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունը կնքելու նպատակահարմարության վերաբերյալ

2014 թվականի դեկտեմբերի 23-ին Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների և կենտրոնական (ազգային) բանկերի միջև կնքվել է «Կապիտալի ազատ շարժն ապահովելու համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկատվության, այդ թվում գաղտնի, փոխանակման մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)։

Համաձայնագրի նպատակն է համակարգել և ընդլայնել ԵՏՄ անդամ երկրների ֆինանսական շուկան վերահսկող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացը: Համաձայնագիրը սահմանում է այն տեղեկատվության շրջանակը, որը պետք է հրապարակվի վերահսկող մարմինների ինտերնետային կայքերում, ինչպես նաև այն տեղեկատվության շրջանակը, որը պետք է տրամադրվի հարցում կատարող ԵՏՄ անդամ երկրի վերահսկող մարմնին որոշակի պայմանների բավարարման դեպքում: Մասնավորապես.

✓ Լիազոր մարմինների պաշտոնական կայքերում տեղադրվում են ֆինանսական շուկայի վիճակի եւ ֆինանսական կազմակերպությունների գործունեության մասին հետեւյալ տեղեկությունները (ըստ յուրաքանչյուր անդամ պետության).

1) այն նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոնք առնչվում են ֆինանսական կազմակերպությունների գործունեության եւ ֆինանսական ծառայությունների մատուցման հետ կապված հարցերի, եթե այդ նախագծերը, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, հասանելի են դարձվում անսահմանափակ թվով անձանց,
2) անդամ պետության ֆինանսական կազմակերպությունների եւ գրանցված անդրսահմանային կազմակերպությունների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,
3) թույլտվությունների եւ (կամ) լիցենզիաների (պետական գրանցման մասին վկայականների) տեսակը եւ տրամադրման ամսաթիվը,
4) ընդհանուր առմամբ բանկերի, ապահովագրական ընկերությունների այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների ակտիվները.
5) ընդհանուր առմամբ բանկերի, ապահովագրական ընկերությունների այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների պարտավորությունները.
6) ընդհանուր առմամբ բանկերի, ապահովագրական ընկերությունների այդ թվում՝ անդրսահմանային կազմակերպությունների սեփական կապիտալը.
7) այլ տեղեկություններ, որոնք չեն հակասում անդամ պետությունների օրենսդրությանը:

✓ Իրենց իրավասության (լիազորությունների) շրջանակներում լիազոր մարմինները ցանկացած լիազոր մարմնի հարցման հիման վրա իրականացնում են տեղեկությունների, այդ թվում՝ կոնֆիդենցիալ տեղեկությունների փոխանակում՝ հնարավորինս լիարժեք ծավալով՝ ներառյալ հետեւյալ տեղեկությունները.

1) պետական գրանցում, լիցենզիայով (թույլտվությամբ) նախատեսված գործունեություն, այլ անդամ պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպության բաժնետոմսերի (մասնակցության բաժնեմասերի) ձեռքբերման համար համաձայնության տրամադրում կամ տրամադրման մերժում, բանկային խմբի (բանկային հոլդինգի), բանկային կոնգլոմերատի կազմ, հիմնական (մայր) կազմակերպության կառավարման կառուցվածք (կառավարման մարմինների կազմ), հիմնական (մայր) կազմակերպության կառավարում եւ ներքին հսկողության համակարգ, բաժնետերեր (մասնակիցներ), փոխկապակցված անձինք, մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, ինչպես նաեւ կազմակերպություններ, որոնց դեպքում այլ անդամ պետության ֆինանսական շուկայում գործող կազմակերպությունը կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցության ուժով կամ կնքված պայմանագրին համապատասխան կամ այլ կերպ հնարավորություն ունի կանխորոշելու նշված կազմակերպությունների կառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումները,
2) այլ տեղեկություններ, որոնք, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, վերապահված են լիազոր մարմինների իրավասությանը (լիազորություններին):

Այսպիսով, ԵՏՄ անդամ երկրների ֆինանսական շուկաները վերահսկող մարմինների հետ տեղեկատվության արդյունավետ փոխանակման, ֆինանսական կազմակերպությունների կոնսոլիդացված վերահսկողության շրջանակներում արդյունավետ համագործակցության ապահովման, ինչպես նաև ֆինանսական շուկաների կարգավորման դաշտի հարմոնիզացիայի համար Հայաստանի Հանրապետության կողմից «Կապիտալի ազատ շարժն ապահովելու համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկատվության, այդ թվում գաղտնի, փոխանակման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրության կնքումը համարում ենք նպատակահարմար: